

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԼԵԶՈՒԻ ՊԱՏԿԵՐԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բան ոչ է բարբառ լեզուոյն, այլ՝ խոկումն մտացն:  
ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ա. Բառի տարողութիւնը պատկերաւորութեան մէջ

Փոխաբերութիւնը համարոււմ է սֆորուած համեմատութիւն: Նրա հիմքը կազմոււմ է երկու երեւոյթների նմանութիւնը: Մի բան ասոււմ, հասկանոււմ են այլ բան: Իմաստային այդ նշանակութիւնը բառը ձեռք է բերոււմ մի առարկայի այս կամ այն յատկանիշով մէկ այլ առարկայ բնութագրելու միջոցով: Ճարտասանութեան ձեւերակների հին հեղինակները մեծ տեղ են տուել փոխաբերութիւնների նշանակութեանն ու օգտագործման եղանակներին: «Փոխաբերութիւնն օժտուած է նորութեան վերին աստիճանի պարզութեամբ, դիրեկտութեամբ եւ թուլանքով – գրել է Արիստոտելը: – Պօսի մէջ հարկաւոր է գործածել պատշաճ մակդիրներ եւ փոխաբերութիւններ, իսկ դրան կարելի է հասնել նմանութեան օգնութեամբ» (13): Արիստոտելը զգուշացնոււմ է, որ բանաստեղծները պատանու թիկնոցը չնետեն ծերունու ուսերին, քանի որ ինչ վայել է մէկին՝ կարող է անպատշաճ լինել մէկ ուրիշի համար: «Եւ եթէ որեւէ բան ցանկանոււմ եւ ներկայացնել գեղեցիկ լոյսի մէջ, ապա անհրաժեշտ է փոխաբերութիւնը վերցնել հենց այդ սեռի ամենալաւ իրերից – բացատրոււմ է անտիկ տեսարանը – իսկ եթէ ցանկանոււմ եւ որեւէ բան ցուցադրել այլանդակ լոյսի

ներքոյ, ապա անհրաժեշտ է փոխաբերութիւնը վերցնել վատթարագոյն իրերի ոլորտից» (14): Նարեկացին հաւատարիմ է մնացել տեսական այս դրոյթներին:

Ասացի, որ փոխաբերութիւնը սֆորուած համեմատութիւն է: Այն կարելի է վերածել բացայայտ համեմատութեան: Բայց կայ մի նրբութիւն: Համեմատութեան մէջ առկայ են նրա երկու թելերը: Եթէ չկայ մէկը, ապա այն ենթադրոււմ եւ լրացոււմ է մտքով: Որովհետեւ համեմատութեան համար առաջնայինը նմանութիւնն է, մինչդեռ փոխաբերութեան համար էականը իմաստային մի նշանակութեան փոխանցումն է մէկ այլ երեւոյթի: Նարեկացին ունի մի այսպիսի փոխաբերութիւն. «Զլին լուսոյս արտասուաւ լցեալ՝ Պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից» (Բան ԼԲ, Բ): Լոյսի լինը համարժէք է աչք կամ աչքեր ուղղակի իմաստին: Կապը ստեղծուած է նրանց գոգաւորութեան նմանութեամբ: Բայց բանաստեղծի համար կարեւոր է ոչ թէ նմանութեան բացայայտումը, այլ մի առարկայի յատկանիշի նշանակութեան փոխանցումը մէկ այլ առարկայի: Լինէր աչք բառն ուղղակի իմաստով՝ Նարեկացու բանաստեղծական սֆանչիի պատկերը («Եւ լոյսիս

լինը արցունքով լցրած՝ ես յոյսով պիտի պաղատանքներս քո մեծութեանը յղեմ վերստին») կը վերածուէր ուղղակի նշանակութեամբ պարզ դատողութեան:

Այսպէս էլ փոխաբերական իմաստ ունեն փուշ, անդաստան, սիրտ, որոմ, հերկել բառերը Նարեկացու հետեւեալ տողում. «Փշոցն մեղաց հերկեցի զանդաստան սրտիս յորոմանն արդիւնատրութիւն» (Բան Ե, Ե), ուր այդ բոլորը բանաստեղծը փոխադարձ կապի մէջ է դրել քնարական հերոսի բարոյական անկման պատկերը տալու համար: Համեմատութեան վերածելու դէպքում այս բառերին պիտի աւելանար նաեւ ցորեն բառը՝ աւետարանական յայտնի առակից (Մատթ., գլ. ԺԳ, 24-30): Ծաւալուն համեմատութիւն կարող է դառնալ Նարեկացու հետեւեալ փոխաբերութիւնը. «Եւ մի շիջցին առ ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք ի տեսականացս աչաց իմաստից» (Բան ԼԳ, Է). թող մեր տեսողութիւնից ինչպէս աչքի լոյսը, այնպէս էլ քո շնորհների լոյսի փայլը չհանգչի մեր մտքի տեսողութիւնից:

Դժուար չէ նկատել, որ փոխաբերութիւնների ինչպէս առադի, այնպէս էլ նրանց նշանակութիւնների մէջ արտացոլուել է ոչ միայն Նարեկացու աշխարհագրագութեան, այլև դարաշրջանի ճաշակի ու հոգեւոր մթնոլորտի իւրայատկութիւնը: Նարեկացու փոխաբերութիւնները պայմանաւորուած են ստեղծագործութեան թեմայով եւ նրա գաղափարական բովանդակութեամբ: Հասկանալի է, որ կրօնական բանաստեղծութեան մէջ միեւնոյն առարկան եւ երեւոյթը կարող է դառնալ տարբեր նշանակութեան փոխաբերութիւն, քնարական բանաստեղծութեան մէջ ունենալ այլ իմաստ: Ստորեւ ես տալիս եմ փոխաբերութիւնների մի շարք, ուր Նարեկացին բնութագրում է Աստուածամօրը եւ նրա որդուն՝ Յիսուսին: Գրականութիւնից յայտնի կայուն փոխաբերութիւնները՝ կենաց

հաց, ծոցածին ծաղիկ, անմահ թագաւոր, բնաւից ստեղծող, հարսն սրբուհի եւ այլն Նարեկացին վարպետօրէն զուգորդում է իր ստեղծած փոխաբերութիւնների հետ՝ երկիր անձնական, բանական բոյս, զգայական անդաստան, անշէջ կայծ, ծառ երկնուղէշ, անթարշամ խնձոր, աստղ առաւօտի, լուսատու մարգարիտ եւ այլն, որոնք անպայման ժամանակին եղել են նոր ու թարմ:

*Սուրբ աստուածածին, տարար զնա ի քեզ,*

*Ախորժ հանգստեամբ կամացն հանութեան,*

*Եղեալ երկիր անձնական բանական բուսոյն,*

*Եւ զզգայական անդաստան կենացն հացի,*

*Եւ վառարան բորբոքման անշէջ կայծական,*

*Եւ վայր դալարաբեր հայրական ծոցածին ծաղկին,*

*Եւ ծառ երկնուղէշ անթարշամ խնձորին,*

*Եւ գործարան գոյութեան լուսատու մարգարտին,*

*Եւ լեռուն արձանունակ երկնալիք վիմին,*

*Եւ այգ արփիասկիզբն աստեղն առաւօտին,*

*Եւ հարկ դիտապետին բանական հօտին,*

*Եւ արքայարան լուսակերտ անմահ թագաւորին,*

*Եւ մայր կաթնամատոյց բնաւից ստեղծողին,*

*Եւ հարսն սրբուհի հօրն Քրիստոսի:*

*ԳՆՄ, 409)*

Թէեւ փոխաբերութիւնների գերակշիռ մասը վերցուած է տեսանելի իրերի ոլորտից, բայց ըստ կրօնական թեմայի պահանջի՝ Նարեկացին արտայայտում է կրօնական միտք ու զգացում: Հատուա-

ծը գեղեցիկ է քարտասանօրէն, բայց սառն է յուզական առումով: Այստեղ հետաքրքիր է փոխաբերութիւնների միմեանց հետ ունեցած կապի համապատասխանութիւնը: Մօրը՝ բանաստեղծը կոչում է անձնական երկիր, որդուն՝ բանական բոյս, մօրը՝ բորբոք վառարան, որդուն՝ անշէջ կայծ, մօրը՝ դալարաբեր վայր, որդուն՝ ծոցածին ծաղիկ, մօրը՝ երկնուղեծառ, որդուն՝ անթարշամ խնձոր, մօրը՝ այգաբաց, որդուն՝ առաւօտեան աստղ եւ այլն: Նարեկացին, սակայն, ստեղծել է նաեւ այնպիսի փոխաբերութիւններ, որոնք առաջին հայեացքից օժտուած են տրամաբանական հակասականութեամբ: Նա գիտակցաբար խախտում է իրերի փոխադարձ կապի ներդաշնակութիւնը, ստեղծում է նոր կապ, որն առանձնակի պատկերաւորութիւն է տալիս նրա խօսքին: Բայց այս դէպքում էլ Նարեկացին չի մեղանչում ոչ քնարական հերոսի հոգեբանութեան եւ ոչ գեղարուեստական նշմարտացիութեան հանդէպ: Այսպէս, օրինակ՝ մեզ համար կայ մէկ արեւ, լոյսի արեգակ: Նարեկացու համար կայ նաեւ խաւարի այրող արեգակ, որ իբրեւ փոխաբերութիւն իսկապէս հանճարեղ է. «Արեգակումն երկու ի յերկուց ծայրից, Մի՛նն՝ խաւարի, եւ միւսն՝ կիզման» (Բան Լ, գ):

Այսպէս էլ, ահա, Նարեկացու համար քնական ու քանական է գրել, որ հարս եկեղեցու փեսան աստուածորդին է, հարսնաճոյրերը՝ հայրապետները. «Փեսայ հարսնութեան սորա՝ Որդին Աստուծոյ կենդանոյ, արիորդք խնջոյից սորին՝ հայրապետացն գումարք» (Բան ՀԵ, ժ): Կամ՝ «Կաթն ստեանց սորա՝ արիւնն Քրիստոսի» եւ «Արգանդ որովայնի սորին՝ աւագանն կենդանարար» (Բան ՀԵ, ժբ): Կամ՝ «Ի կորեանց առիծուց անձնական աւճս եղեռնային» (Բան Բ, ա), «Եւ կայլակ կողիդ՝ գարիւն խաղողոյ» (Բան ՂԳ, ժ) եւ այլն:

Նարեկացու փոխաբերութիւնների ինքնատիպութիւնն առաւել վառ է արտայայտուել իրականի եւ գերբնականի, նիւթականի եւ հոգեւորի, մարդկայինի եւ աստուածայինի այն զուգորդութիւնների մէջ, ուր սովորական առարկան էլ փոխաբերական իմաստով գործածուելու դէպքում պահպանում է իր բանաստեղծական գեղեցկութիւնը: Տարբեր ոլորտներից վերցրած փոխաբերութիւնների գեղարուեստական արժէքին անդրադարձել է Հեգելը: Նա գտնում է, որ փոխաբերութիւնների ստեղծման մէջ գլխաւորն այն է, որ «բարձր ոլորտին պատկանող երեւոյթները, գործունէութիւնը, վիճակները ցածր ոլորտ փոխադրելու դէպքում ստանան ակնբերութիւն եւ ցածր կարգի երեւոյթները մարմնաւորուեն բարձր կարգի երեւոյթների նշանակութեամբ: Կենդանականը, օրինակ, ինքնին աւելի արժէք ունի, քան անկենդանականը, եւ խօսքն աւելի արտայայտիչ է դառնում, երբ անկենդան բնութեան երեւոյթները բնութագրում են որպէս կենդանի»: Եւ ապա՝ «էլ աւելի արտայայտչականութեան հասնում են այն դէպքում, երբ բնութեան երեւոյթները եւ զգայականը մարմնաւորուում են որպէս հոգեւոր երեւոյթներ եւ դրանով իսկ վեհանում եւ ազնուանում են նրանք»: Հեգելը բերում է օրինակներ. Կալդերոնից՝ «Ալիքները տնփում են նաւերի ծանր բեռն տակ», Վերգիլիոսից՝ «Կալը հառաչում է կալսելու պահին», «ծիծաղող դաշտեր» եւ այլն: «Այն, ինչ յատուկ է միայն մարդուն, - շարունակում է Հեգելը, - այստեղ օգտագործում է բնութեան երեւոյթներն արտայայտելու համար»: Բայց կայ նաեւ հակառակը՝ բնութեան երեւոյթների միջոցով արտայայտում է հոգեւորը, այն ինչ յատուկ է մարդուն: Եւ Հոգելն որ դրոյթն աւարտում է այսպէս. հոգեւորն իր հերթին «դառնում է էլ աւելի ակնբերելի այն փոխաբերութեան շնորհիւ, որը

վերցուում է բնութեան առարկաների ոլորտից» (15)»:

Սա հաւասարապէս վերաբերում է Նարեկացու պատկերաւորման բոլոր միջոցներին: Ցածր կարգի երեւոյթները բարձր կարգի երեւոյթների նշանակութեամբ Նարեկացին առաւելապէս օգտագործում է անձն առարկայացնելու դէպքում: Այսպէս՝ «Ծառս ամբարձուղէշ, ստուարաստեղն, Տերեւալից՝ ունայն ի պտղոց» (Բան Թ, ք), «Աղու աղանիս միշտ յիմարութեամբ, այլ ոչ հանդարտութեամբ», «Տաղաւարս մերժեալ՝ հասեալ ի կործանումն» (Բան Բ, ա), «Զիթենիս ամայական, անպտղական եւ կործանական» (Բան ԻԲ, ք), «Նթէ իցէ՞ արդեօք նկատել զգագանաբեկ հերքելի ոչխարս վերստին կամաց գթութեան քո հաւտ» (Բան ԻԵ, գ). «Նաւս ընկղմեալ, մարգարիտս մանրեալ» (Բան ԿԷ, ք) եւ այլն:

Քննարկան հերոսի բարդ ներաշխարհը տեսանելի եւ զգայելի դարձնելու համար Նարեկացին շոյալօրէն դիմում է թէ՛ բոյսերի, ծառ ու ծաղիկների եւ թէ՛ կենդանիների, հաւքերի ու սողունների, թէ՛ երկրային եւ թէ՛ երկնային մարմինների, թէ՛ անգին ֆարերի եւ մետաղների, թէ՛ կենցաղային իրերի եւ եկեղեցական սրբութիւնների եւ, առհասարակ, բնութեան եւ իրականութեան ամենաբազմազան առարկաների ու երեւոյթների փոխաբերական օգտագործմանը, ուր դրսեւորուել է ոչ միայն նրա նուրբ քաղաքը, այլեւ գիտելիքների հարստութիւնը: Ահա փոխաբերութիւնների մի շարք, ուր Նարեկացին օգտագործել է ծառ, սաղարթ, ծաղիկ, պտուղ բառերը մի յաջորդականութեամբ, որը ոչ միայն ամբողջական պատկեր է ստեղծում, այլեւ ներքին շարժում եւ գործողութեան պատրանք:

*Մի՛ յարուցես ընդ իս զծառն անիծից,  
Մի՛ արձակեր ի յիս զսաղարթ վնասուցն,  
Մի՛ ընձիւղեր զծաղիկ մեղացս,*

*Մի՛ բերցես ընդ առաջ զնամակ  
պարտուցս,*

*Մի՛ արտաբերեր զէութիւն պտղոյն:*

*Բան ՀԸ, գ)*

Ակնառու դարձնելու համար բերեմ մի քանի օրինակներ եւս, ուր փոխաբերութիւնները վերցուած են բնութեան եւ իրականութեան ամենատարբեր ոլորտներից՝ ամենատարբեր մտքեր եւ ապրումներ արտայայտելու համար: «Եւ մատուցեալ եղեալ ի հուր քախժութեան անձին տոչորման՝ գպտուղ ըղձից քեններոյ սասանեալ մտացս բուրվառաւ կամացս առաքել առ քեզ» (Բան Ա, ա). «Նթէ անաւրէնութեան մարիկ խորտակիչ հողմոյ յանկարծ բախեցէ զհաստուածս մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովուս, Հանդարտեցի անդրէն՝ ղեկաւ այս թեւոց ի քեզ պատկանեալ» (Բան Գ, գ). «Նարանաւ քանիս արտաքս հերքել» (Բան Զ, ա). «Եւ յափն մահու ժամանեալ» (Բան Ե, ք). «Եւ ի մթութենէ երկեւանութեան խաւարի գտեալ» (Բան ԺԱ, ա). «Համբուրեմ հաւատոց շրթամբք գպատկեր քանիս» (Բան ԺԲ, գ). «Սուսերք հրամանի յաղթական քանիդ Զկասպ սատակման մահուն խզեցեր» (Բան ԺԶ, ա). «Թափեա գմբուրս անաւրէնութեան քմրրութեան մահու քաժակս» (Բան ԺԹ, ա). «Ոչ կացուցի յոտին գերիվար մտացս երացանաւ քանին» (Բան Ի, ք). «Ոչ նոր ինչ գտեր զյանցանացս պարտեաց մառախուղ» (Բան ԻԲ, գ). «Թէ ո՞ստ տնկոյն բերկրութեան, յորմէ գաւսացայ» (Բան ԻԴ, ա). «Ընդոստեա ի սանձս կապոյ երասանաց ըմբռնման Զցնդեալ մտացս վայրագութիւն» (Բան ՀԱ, դ). «Ողորմութեամբ քո լցցի գուրն իմ գերութեան» (Բան ԿԵ, ք). «Մաքրութեան ծաղիկ ոչ ունիմ եւ ոչ իւղ ողորմութեան» (Բան ԿԸ, գ) եւ այլն:

Ինչ վերաբերում է քայական փոխաբերութիւններին, ապա պէտք է ասել, որ Մատեանի քննարկան հերոսը չունի

հոգեկան վիճակների, ապրումների եւ գգացմունքների այնպիսի թրթիռ ու գրգիռ, որ իր պատկերաւոր արտայայտութիւնը գտած չլինի Նարեկացու այլաբերութիւնների մէջ: Իրականութիւնից վերցրած պատկերների, համեմատութիւնների եւ փոխաբերութիւնների միջոցով Նարեկացին ձգտում է բացայայտել ֆնարական հերոսի ներաշխարհը, ապա բարձրանալ անդրանցական պատկերացումների, միստիկ խոհերի ու գաղափարների ոլորտը: Ահա բայական փոխաբերութիւնների մի շարք, ուր ֆնարական հերոսի դրամատիզմը հասցուած է ընդհանրացման բարձրակէտին. «Ծաղկիմ, եւ ոչ պտղաբերիմ», «Գրիմ, եւ իսկոյն եղծանիմ» «Նաւեմ, եւ ի գիծն թուլանամ, Սկանիմ, եւ ի հանգիստն ոչ ժամանեմ, Կարգիմ, եւ դարձեալ սասանիմ, Լնանիմ, եւ կրկին հեղում»: Ապա եւ՝

*Ձշիջեալ չարիսն նոյնչափ արծարծեմ,*

*Սուղ ինչ փաշալերեմ, եւ առ աւելապէս լքանիմ,*

*Լարիմ, եւ իսկ եւ իսկ առ նմին մեղկիմ,*

*Ձայս կարկատեմ, եւ զայն պատանեմ,*

*Խլեմ գեղիճն, եւ տատասկ տնկեմ,*

*Ընդ ամբառնալն՝ եւ այսրէն բերիմ,*

*Մտանեմ ի բոյնն աղանի, եւ անդուստ ագռաւ ելանեմ:*

*(Բան ՀԱ, ք)*

Նարեկացին համոզուած է, որ Աստծուն առաւել հանելի է մեղաւորի խնդրուածքը, քան արդարի մաղթանքը: Մեղաւորը գուր է հայցում, արդարը՝ վարձ: Մեղաւորը թողութիւն է խնդրում, արդարը՝ պարգեւ: Նրանց այդ ապրումների տարբերութիւնը կառուցուած է ներքին հակադրութիւնների վրայ: Քնարական հերոսը ողբերգութիւն է ապրում, որ արդարները ձգտել եւ հասել են իրենց

նպատակին՝ աստուածային շնորհի, մինչդեռ ինքը ձգտում եւ չի հասնում. *Լուացեալ լինիմ, եւ ոչ պայծառանամ, Արեւու ծագեալ, եւ ոչ լուսաւորիմ, Մեղր նաշակեմ, եւ ոչ փաղցրանամ, Ռետնիւ լնանիմ, եւ ոչ բժշկիմ, Միշտ կանխեմ ի նոյն, եւ դատարկ երբեիմ,*

*Հանապազ ձաղիմ, եւ ոչ երբէք խրատիմ, Ողոճիմ դարձեալ, եւ ոչ զգաստանամ:*

*Բան ԿԲ, ա)*

Գործողութիւնը չի հանգում նպատակի իրագործմանը. լուացուած լինել եւ չփայլել, ծագած արեւի տակ լինել եւ չլուսաւորուել, մեղր նաշակել եւ փաղցրութիւն չզգալ, բուժիչ խեթեր ընդունել եւ չբժշկուել եւ այլն: Ակներեւ է, որ այստեղ արեւը արեգակ չի նշանակում, լուացուելը՝ լուացուել, մեղրը՝ մեղր, փաղցրանալը՝ փաղցրանալ եւ այլն: Բայց սա չի նշանակում, թէ այդ փոխաբերութիւնները պէտք է հասկանալ գուտ աշխարհիկ ընկալմամբ. իրրեւ՝ արեւն ինձ համար խաւար է ծագում, վերքս չի բուժում ոչ մի բալասան, մեղր էլ նաշակեմ՝ էլ համ չեմ զգում եւ այլն: Նարեկացու համար կայ նաեւ հոգեւոր նշանակութիւնը, այսպէս՝ զղջման արցունքով թէեւ լուացում, բայց չեմ մաքրում մեղքերի աղտից, նշմարտութեան արեւը թէեւ նառագում, բայց հոգում մութը չի լուսաւորում, թէեւ իմաստուն մտքեր նաշակում, բայց չեմ իմաստնանում, նոյն պատուիրանները թէեւ միշտ լսում, սակայն վերստին դատարկ եմ թւում, թէեւ ձաղկում, բայց չեմ խրատում եւ այլն:

Մեկնաբանման իմ այս փորձը բնաւ էլ սպառիչ չէ: Նարեկացու գեղարուեստական մտածողութեան անանց հմայքը այն է, որ այն միշտ տեղ է թողնում նոր մտեցման եւ աւելի խոր մեկնաբանման համար:

Ա. ՂԱԶԻՆՆԱՆ